

Ա. Ա. Ղազիբյան

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՏԱՂԻ ՇԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1.

Նույնանուն հեղինակների ստեղծագործությունները, ինչպես նաև նրանց անձնավորությունները միջնադարյան ձևապատկերի հաճախ են շփոթել իրար հետ: Առաքել Բաղիշեցին և Առաքել Սյունեցին՝ հրկուսն էլ բանաստեղծ ու մատենագիր՝ այդպիսի հեղինակներից են: Նրանք ժամանակակից են իրար, բաղիշեցու երիտասարդական տարիները համընկնում են Սյունեցու ծնունդի տարիներին: Երկու բանաստեղծներն էլ հղել են հոգևորականներ՝ վարդապետի աստիճանով: Այս հանգամանքները, ի թիվս այլ պատճառների, նպաստել են նրանց ստեղծագործություններն իրար հետ շփոթելուն և, ձևապատկերից փոխանցվելով տպագրությանը, հասցրել են մինչև իսկ այդ հրկուս հեղինակների նույնացմանը: Այսպես, 1721 թ. Կոստանդնուպոլսում լույս է տեսել Առ. Սյունեցու «Աղամզիրքը» խորագրված՝ «Արարիալ տէր Առաքել վարդապետի Բաղիշեցույ և Սիւնեաց կախկոպոսի»:

Երկու հեղինակների շփոթության խնդրին առաջին անգամ հարեանցիորեն անդրադարձել է պատմաբան Մ. Զամչյանը: «Ժամանակակից հղև Գրիգորի նշանները և Առաքել վարդապետ կախկոպոս Սիւնեաց, որ նստէր առաջնորդութեամբ ի վանս Ստաթևու. սա արար ի թուին հայոց ՊԾԸ (1403) գիրս ոտանաւորաց միջակ ոճով՝ հազար հարիւր և ութսուն տուն ՚ի վերայ արարչութեան և ՚ի վերայ տնօրինութեանց Քրիստոսի, որ ասի Աղամզիրք. գրեաց և ներբողեան ոտանաւոր և ՚ի վերայ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին. և ՚ի վերայ սրբոյն Գրիգորի Նարեկացույ. և ՚ի վերայ Մերենց Գրիգորի նշանները, և զայլ ոտանաւորս ներբողականս և պատմականս բազում լուծ: Կաւ և այլ Առաքել վարդապետ Բաղիշեցի, որ արար ոտանաւորս և զանձս, զոր ոմանք նոյն համարին ընդ վերնոյն»:

Զամչյանը միայն մատնանշում է փաստը՝ առանց բացատրության: Զոտարկելով ոչ միայն նրանց, ովքեր հակված են երկու տարբեր հեղինակների նույն անձնավորությունը համարելուն, այլև պատմաբանն ինքը Բաղիշեցուն համարելով միայն զանձերի ու տաղերի հեղինակ և, սխալմամբ, Բաղիշեցու՝ Գր. Մերենցի նահատակությանը նվիրված ձոները Սյունեցուն ընծայելով, ակամա, ավելի է մխոլանում շփոթության հարցը: Հետագայում այդ հեղինակների գործերի ու անձերի շփոթության անդրադարձել են Հ. Զարրհանալյանը, Ղ. Ալիշանը, Հ. Տաշյանը, Տ. Պալյանը, Մ. Պոտուրյանը, Ն. Ակինյանը, Ա. Չոպանյանը, Հր. Աճառյանը, Մ. Արևիզյանը, Հ. Անասյանը և ուրիշները: Նրանցից ոմանք միայն բավարարվել են մատնանշելով նույնանուն հեղինակներին իրար հետ շփոթելու իրողությունը, ոմանք էլ ըստ ձևապատկերի տվյալների, երբեմն էլ ենթադրաբար, Սյունեցու ստեղծագործությունն ընծայել են Բաղիշեցուն, ի՛նչպես նաև Սյունեցուն:

Առաջինը, որ համեմատաբար ավելի հանգամանորեն է անդրադարձել երկու հեղինակների, առաջին հերթին՝ Առ. Սյունեցու ստեղծագործությունների տարբերակմանը, հղել է վաստակաշատ բանասեր Մ. Պոտուրյանը: 1907 թ. Վենետիկում նա հրատարակում է «Աղամզիրքը», որն ընդգրկում է Առ. Սյունեցու շփոթած համանուն երեք ծավալուն գործերը: Գիրքն ունի հակիրճ նախարան՝ օգտագործված ձևապատկերի համառոտ նկարագրությամբ: Յոթ տարի անց, 1914 թ. նույն բանասերի ուսումնասիրությամբ լույս տեսավ «Առաքել Սիւնեցի և իր քերթուածները» ժողովածուն՝ Սյունեցու կենսագրության վերաբերյալ համառոտ ակնարկով, ինչպես նաև օգտագործված ձևապատկերի նկարագրությամբ և մատենագիտական դիտողություններով:

Ուսումնասիրության մեջ Պոտուրյանը երկու հեղինակների գործերը զանազանելու հարցը դնում է ուղղակի ու կարճ. «Ո՞ր Առաքելն է այս կամ այն քերթվածին հեղինակը? և, երկրորդական գործերի նկատմամբ հիմնականում հենվելով «գրական ոճը կարող է զանազանել զա-

1 Մ. Զամչյան, Պատմութիւն հայոց, Վենետիկ, 1786, հատ. Գ, էջ 452:

2 «Առ. Սիւնեցի և իր քերթուածները», Վենետիկ, 1914, էջ ԽԳ:

նունքս դրույթի վրա, նա հավաստի կամ հավանորին Սյունեցուն է համարում հիսունվեց քերթված՝ հրատարակելով դրանք:

«Բացի մեր այս հրատարակածներեն,—դրում է այնուհետև Պոտուրյանը,—ղեւ կճանչնանք շատ մը քերթվածներ՝ Առաքելի անվամբ, որոնք ապագային ուրիշ ստվար հատոր մը պիտի կաղմեն, միանալով Առաքել Բաղիշեցվո քերթվածոց և Սյունեցվո «Դրախտգիրք»-ին հետ. և այդ հատորին կվերապահենք մեր ուսումնասիրության ամբողջացումը և քանի մը նոր անդրադարձություններ»³:

Ապագային թողնված այդ ստվար հատորը դժբախտաբար լույս չի տեսել: Կասկածից վեր է, որ հմուտ բանասերը կանդրադառնար նաև իր իսկ հրատարակած առանձին գործերի հեղինակության հարցին՝ նոր փաստերի լույսի տակ առաջարկելով ուղղումներ ու ճշտումներ:

Բանասեր Ն. Ակինյանը մատենախոսական իր մի հոդվածում⁴ նույնպես խոստանում է ապագա մի ուսումնասիրության մեջ կենսագրական նոր տեղեկություններ հաղորդել Առ. Սյունեցու մասին և, դրանից բացի, «այնտեղ առիթ պիտի ըլլա նաև Առաքելի գրական արտադրությունց՝ հատկապես հարազատ և անհարազատ տաղերու թվին վրա խոսելու», այն գործերի մասին, որոնք Պոտուրյանի կողմից «կամ նկատի չեն առնված առհասարակ, և կա՛մ ոչ ըստ արժանվույն գնահատված են»⁵: Ակինյանի խոստացած այդ աշխատությունը ևս՝ ցարդ լույս չի տեսել:

Բազմավաստակ երկու բանասերների խոստումներից մեկ համար առանձնապես կարևոր է Բաղիշեցու և Սյունեցու ստեղծագործություններին հետազոտում ևս անպայման անդրադառնալու նպատակամիտումը. նոր ուսումնասիրության անհրաժեշտությունը և, հատկապես, Առ. Բաղիշեցու ստեղծագործությունների հրատարակության և ուսումնասիրության կարևորությունը: Այս տեսակետից էլ, կարծում ենք, ավելորդ չէ անդրադառնալ միջնադարյան մի տաղի հեղինակային պատկանելության հարցին, մի տաղ, որը վերագրվել է նույն դարաշրջանի երեք հեղինակների՝ Առ. Սյունեցուն, Առ. Բաղիշեցուն և Մկրտիչ Նաղաշին:

2.

Տաղը հետաքրքրական բանաստեղծություն է՝ նվիրված միջնադարյան քնարերգության հիմնական թեմաներից մեկին՝ մահվան թեմային: Հեղինակը, Հ. Թումանյանի արտահայտությամբ, «...սողորված է Արևելքի վառ արևի տակ, ազգերի զերեզմանների ու մեծ ավերակների վրա ծնած՝ էն փիլիսոփայությամբ, թև աշխարհքը ունայն է ու կյանքը վաղանցուկ»⁶: Տաղի հիմնական գաղափարը մարդկային փառքի ունայնության, մեղսածին վայելքներից ու մարմնածարավ հաճույքներից հրժարվելու և դրա փոխարեն հոգու փրկության համար քարի գործերին հետևելու գաղափարն է, երկրային վաղանցուկ վայելքների փոխարեն՝ երկնային վայելքները հավիտենապես վայելելու վարդապետական բարոյախոսությունը: Փառքն ունայն է, մահը՝ ամենազոր.

Ամենայն փառք մարդոյ դատարկ և ունայն,
Սողոմոն զայս ասէ շնորհօք տիրական,
Բոլորից թէ լինիս դու տէր և իշխան,
Բայց յևտոյ մտանես ի հող և ՚ի զնղան:

Կյանքը երազ է, դյուրասահ ու մեղսաներկ.

Զերդ զերազ գիշերոյ է անցաւորիս,
Զարթնուցուս դու յևտոյ՝ այլ ոչ հասանիս:

Մարդը՝ անցավոր, վաղաթառամ ծաղիկ.

Ժամանակ մի ծաղկի նման կու փայլէ,
Բայց յևտոյ լալագին ի հող մտանլ:

Իսկ մարմինը, մեղսասեր ու կենսատենչ մարմինը.

Լաւ մտօքդ հայնաց ի մարմնոյդ վերայ,
Որ այսօր կենդանի՝ վաղն ի հող դառնայ:

3 Անդ, էջ ԾԳ—ԾԴ:

4 «Հանդէս ամսօրեայ», 1920, № 1—3, էջ 53:

5 Անդ, էջ 53:

6 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1951, հ. IV, էջ 176:

Ուստի՝

Դադարեա ի շարեաց, բարեաց հետևիր...
Ռատ բաշխեա քսողցկոց ի բում սեղանի...

Այլ այդ բոլորը հոգու համար, հոգու փրկության, նրա անմահության համար, քանի որ.

Շահ չկայ յաշխարհէս ու՛ր ոք դատեսցի,
Բայց միայն թէ բարեաց գործոց հետևիր...

Այս տաղը Մ. Պոտուրյանը ընծայել է Առ. Սյունեցուն⁷, Տ. Պալյանը՝ Առ. Բաղիշեցուն⁸, Հայտնի՝ է եղել արդյոք Պոտուրյանին, որ տաղը ձևագրերում, բացի Սյունեցուց, վերագրված է Ա. Մկրտիչ Նաղաշին, և Առ. Բաղիշեցուն՝ Այո՛, նրան հայտնի է եղել ինչպես Վենետիկի Մխիթարյան ձեռագրատան թիվ 1371 ձեռագիրը⁹, որը տաղի հեղինակ է ճանաչում Մ. Նաղաշին, այնպես էլ 1895 թ. «Արարատ» հանդեսում տպագրված օրինակը¹⁰, ուր տաղն ընծայվում է Առ. Բաղիշեցուն՝ ըստ էջմիածնի N 282 ձեռագրի (այժմ՝ Մատենադարան, ձեռ. N 3189): Պոտուրյանը ծանոթ է եղել նաև Տ. Պալյանի հրատարակությանը՝ Հրատարակված օրինակներից բացի, Պոտուրյանը ձեռքի տակ ունեցել է Վենետիկի Մխիթարյան մատենադարանի հինգ այլ ձեռագրեր (թիվ 171, 1330, 1339, 1371, 1383): Ըստ խորագրերի՝ դրանցից երկուսը տաղը վերագրում են Առ. վարդապետին, մեկը՝ Առ. Սյունեցուն, մեկը՝ Մ. Նաղաշին, մի ձեռագիր թերի է սկզբից:

Ինչ էլ ցույց տալիս խորագրերի այս բազմազանությունը Առաջին այն, որ տաղը պատկանում է երեք հեղինակներից մեկին և, երկրորդ, որ Պոտուրյանը, դիտենալով այդ, հարցը յուծել է հօգուտ Սյունեցու՝ «Ամենայն փառք մարդոյ...» խրատական այբուբենական քերթված մը, Սյունեցվո ոճը և լեզուն ակներև է¹¹:

Բանաստեղծի լեզուն և ոճը՝ անհատական խառնվածքի և ստեղծագործության ընդհանուր ոգու հետ՝ կարող է լուրջ փաստարկ լինել որևէ գործ այս կամ այն հեղինակին վերագրելու գործում: Եա կարևոր է և անհրաժեշտ, բայց բավական չէ: Հարցը հեշտ կլուծվեր, եթե հեղինակները չլինեին ժամանակակիցներ, շունենային ստեղծագործական, թեմատիկ և տաղաչափական ընդհանրություններ, չլինեին զրեթև նույն աշխարհայացքի, հասարակական նույն կենսամիջավայրի ու դիրքի մարդիկ՝ օժտված բանաստեղծական թերևս նաև հավասարաշնորհ ձիրքով: Ահա թե ինչու այստեղ արդեն ստվերարկվում է ոճի հարցը և, ընդհակառակը, կարևոր նշանակություն է ստանում բանասիրական հետազոտությունը: Կարևոր է, իհարկե, նաև ձեռագրերի գրության ժամանակը, սակայն ձեռագրերից ամենահինը՝ ձեռ. N 6179, չի անցնում 1554 թ., ուր տաղը, ցավոք, անխորադիր է:

Երևանի Մ. Մաշտոցի անվան մատենադարանի 22 ձեռագիր ունեն «Ամենայն փառք մարդոյ...» տաղի լրիվ կամ թերի 24 ընդօրինակություն: Ըստ խորագրերի՝ դրանցից տասը տաղի հեղինակ են ճանաչում Առաքել վարդապետին՝ առանց տարբերակման, չորսը՝ Մկրտիչ Նաղաշին, երկուսը՝ Առ. Սյունեցուն, մեկը՝ Առ. Բաղիշեցուն, երեքն անխորագիր են, չորս խորագրեր հեղինակի անուն չեն տալիս: Վիեննայի մատենադարանի գրչագրերում, ըստ Տաշյանի ձեռագրացուցակի, կա տաղի երկու ընդօրինակություն՝ մեկն անխորագիր, մյուսը՝ խորագրով՝ Առաքել վարդապետի անունով¹²: Երկու ընդօրինակություն կա նաև Անկյուրիայի ձեռագրերում՝ մեկը դարձյալ անխորագիր, մյուսը նույնպես Առաքել վարդապետի հեղինակությամբ¹³: Ղալաթիայի ազգային մատենադարանի տաղարաններից մեկը (ձեռ. թիվ 141) նույնպես ունի տաղի ընդօրինակությունը՝ խորագրի մեջ առանց հեղինակի անվան հիշատակության¹⁴ (տաղարանը ներկայումս գտնվում է Երևանի Մատենադարանում ձեռ. 9597 թվահամարի տակ):

7 «Առ Սյունեցի և իր քերթուածները», էջ 276:

8 Տ. Պալյան, Հայ աշուղներ, Զմիւռնիա, 1911, տետր Ա, էջ 134:

9 «Առ. Սյունեցի և իր քերթուածները», էջ 1Բ:

10 «Արարատ», 1895, N 4, էջ 124:

11 «Առ. Սյունեցի և իր քերթուածները», էջ ՄԱ:

12 Բ. Տաշյան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Վիեննա, 1895, էջ 287, 969:

13 Բ. Կյուրկեսեւ, Յուցակ ձեռագրաց Անկյուրոյ Կարմիր վանուց և շրջակայից, Անթիլիաս, 1957, էջ 670, 737:

14 Բ. Կյուրկեսեւ, Յուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի, Անթիլիաս, 1961, էջ 886:

Ինչպես տեսնում ենք, ձեռագրացուցակները նոր բան չեն ավելացնում եղած փաստերին՝ չետաքրքրող հարցի տեսակետից:

3.

Քանակապես «Ամենայն փառք մարդոյ» տալիս ամենից շատ վերագրվել է 15-րդ դարի նշանավոր բանաստեղծ ու հայտնի նկարիչ Մկրտիչ Նաղաշին: Հեղվառճական աուսնձնահատկությունների, տաղաչափության ու զաղափարական բովանդակության տեսակետից տաղը, իսկապես, սերտ աղբյուր ունի Նաղաշի ստեղծագործության հետ: Հասարակական կյանքի այլանդակությունների, մարդկային ապականված բարքերի համարձակ քննադատությունից բացի, նրա ստեղծագործության մեջ իր արտացոլումն է գտել նաև աշխարհի ունայնությունը, կյանքը սուտ երազ լինելու, բարության ու բարի հիշատակի անմահության, ինչպես և հոգու՝ անզախարհում սպասված երջանկությանն արժանանալու կրոնաշղարշ գաղափարախոսությունը (սկեցանէ մեծութիւն և փառք աշխարհիս», «Երազ է սուտ, եղբարք, աշխարհիս բաներն ի լման» և այլն):

Քվում է, հավանական ու տրամաբանական է կարծել, որ գրիչները իրավացի են եղել՝ տաղն ընծայելով Մկրտիչ Նաղաշին: Իրականում, սակայն, նրանք սխալվել են: Նրանցից ոմանք նույնիսկ զգացել են իրենց սխալը: Այսպես ենք կարծում ահա թե ինչու. Մատենադարանի ձեռ. 1637, էջ 223-ր կա հետևյալ խորագիրը. «Նաղաշի ասացեալ»: Տաղի ընդօրինակությունը մնացել է կիսատ, ընդհատվել է 224-ա լջում՝ հենց գրչի ցանկությամբ: Ընդհատված նույն թերթի հաջորդ՝ 224-ր էջից գրիչը վերսկսում է տաղի նոր ընդօրինակություն՝ այս անգամ առանց խորագրելու և, վերջացնելուց առաջ, տաղի հորդորակը խորագրում է այսպես. «Ըստ անուան երգողին»: Տաղի հորդորակի սկզբնատուերը հոգում են «Առաքելի է» աքրոստիքը: Պարզ է, որ առաջին խորագիրը՝ «Նաղաշի ասացեալը» գրիչը գրել է սխալմամբ, կամ այդ խորագիրն ունեցել նրա ձեռքի տակ եղած սկզբնաղբյուրը: Զգալով սխալը, միևնույն է իր թե սկզբնաղբյուրի, գրիչը վերսկսել է տաղի ընդօրինակությունը, սակայն այն չի խորագրել, հավանաբար, ուրիշ օրինակներ ձեռքի տակ չունենալու պատճառով:

Սրկու ձեռագիր ունեն ըստ էության նույն խորագիրը. ձեռ. № 3081, էջ 45-ա, «Նորին տաղ հոգոյ» (նախորդը՝ «Տաղ հոգոյ Նաղաշ վարդապետի ասացեալ») 15 և ձեռ. № 3411, էջ 81-ր «Նորին տաղ հոգոյ ասացեալ» (նախորդը՝ Մկրտիչ Նաղաշի սկեցանէ մեծութիւն» տաղը) 16: № 3411 ձեռագիրը, որ տաղարան է, ունի տաղի մի այլ ընդօրինակություն՝ խորագրված «Խրատական բաներս Առաքել վարդապետէ ասացեալ» 17: Չնայած այն բանին, որ միևնույն տաղարանում եղած այս երկու ընդօրինակությունները փոխադարձ կասկածի տակ են դնում հեղինակներից յուրաքանչյուրին պատկանելու հավաստիությունը, մի պահ սակայն, թողնենք այս հանգամանքը և անդրադառնանք Նաղաշին վերագրված լինելու իրական փաստին: Տաղի այս ընդօրինակությունը շունչի հորդորակը, ուր ոչ միայն սկզբնատուերն են հոգում հեղինակի անունը, այլ և կա գրա ուղղակի հիշատակությունը՝ Անիմաստ Առաքել, քեզ ճարակ արա...

Հորդորակի բացակայությունը մեկն է տաղը թյուրիմացորեն Նաղաշին վերագրելու պատճառներին: Դրա հետևանք է եղել և № 5668 ձեռագրի՝ «Այլ տաղ Նաղաշի ասացեալ» խորագիրը: Այս ընդօրինակության մեջ ևս պակասում է հորդորակը: Թյուրիմացության երկրորդ պատճառը տաղաչափական նախօրինակի, երգվող տաղի հեղինակի հիշատակությունն է: Դա պարզում է № 3081 ձեռագրի ընդօրինակությունը: Հայտնի է, որ գրիչները տաղը արտագրելիս սովորաբար հիշատակում են այն երգելու եղանակը. «Յիսուս որդու ձայն ասա», «Յո՛վասափի գոյն է» և այլն: «Ամենայն փառք մարդոյ» տաղի համար էլ հաճախ է հիշատակված «Անցանէ մեծութեան ձայն է» ծանոթագրությունը: Գիտենալով, որ հանրածանոթ այդ տաղի հեղինակն է Նաղաշը, գրիչները հեշտությամբ կարող էին սխալվել և «Ամենայն փառք մարդոյ» տաղը վերագրել նրան: Ի դեպ, նույն այս պատճառով է տաղը Նաղաշին վերագրվել նաև Վենետիկի մատենադարանի թիվ 1371 ձեռագրում 18:

Թյուրիմացության երրորդ պատճառը տաղի կրկնակն է.

Մի՛ մնար, մի՛ մնար անդարձ ի մեղաց,

Մի՛ մատներ, մի՛ մատներ զհոգիդ տանջանաց» 19:

15 Ձեռ. 3081, էջ 43-ա:

16 Ձեռ. 3411, էջ 76-ա:

17 Անդ, էջ 114-ր:

18 «Առ. Միւնեցի և իր քերթուածները», էջ 1Բ:

19 Մատենադարան, ձեռ. 3189, էջ 56-ր:

Նաղաշի «Անցանլ մեծութիւն և փառք աշխարհիս» սկզբնատողով տաղը նույնպէս ունի այս ստղերը: Այստեղ դրանք կրկնակ չեն, ունեն իրենց բնական տեղը՝ մերված բանաստեղծութեան բնդհանուր հյուսվածքին²⁰:

Մինչդեռ, բնդհակառակն, «Ամենայն փառք մարդոյ...» տաղի մեջ այդ ստղերը նախ՝ բոլոր օրինակներում չէ, որ կան և, երկրորդ, ընդմիջարկութիւն են տաղի այբբենական հերթապայութեամբ տողերի միջև²¹: Բացարկված չէ նաև, որ դրանք լինեն տարածված մի երգի կրկնակ՝ օգտագործված երկու բանաստեղծների կողմից էլ:

Այսպիսով, կարելի է համարձակորեն պնդել, որ տաղի վիճելի հեղինակը Մ. Նաղաշը չէ, այլ Առաքելը, մանավանդ որ տաղի մեջ կա հեղինակի՝ Առաքելի անվան կրկնակի հիշատակութիւնը, որն անվերապահ է դարձնում հեղինակի հարցը:

4.

Արդ, ո՞ր Առաքելն է տաղի հեղինակը. Սյունեցի՞ն, թե՞ Բաղիշեցի:

Նախապէս ասենք, որ տաղի հեղինակը Առ. Սյունեցին չէ: Ինչո՞ւ, ի՞նչ փաստեր կան:

Տաղն Առ. Սյունեցուն է վերագրված երեք ձեռագրերում:

1. Մատենադարան, ձեռ. 2079, էջ 358բ, խորագիրը՝ «յԱռաքել վարդապետէ Սիւնեաց»:
2. Մատենադարան, ձեռ. 7507, էջ 360բ, խորագիրը՝ «Եւ այլ խրատական բան նոյն Առաքել վարդապետէ ասացեալ» (նախորդը՝ հատված «Աղամզրբից»):
3. Վեներտիկի մատենադարան, ձեռ. թիվ 171, էջ 746, խորագիրը՝ «յԱռաքել վարդապետ Սիւնեաց»²²:

Նախ անդրադառնանք № 7507 ձեռագրին. ինչպե՞ս հասկանալ «նոյն Առաքել վարդապետէ ասացեալ» բառերը: Թվում է, շատ պարզ. եթե նախորդ գործի հեղինակը Առաքել Սյունեցին է, ապա անկասկած է, որ նույն Առաքելն էլ նույն Սյունեցին է: Նախորդ գործը մի հատված է «Աղամզրբից». «Տաղ յԱռաքել վարդապետէ ասացեալ վասն հողձարի և յերկնային ճանապարհի...»²³: Այս խորագրում չկա Սյունեցի անունը և դժվար է ասել, թե գրիչը նույն Առաքելի տակ գիտակցել է Սյունեցուն, մանավանդ որ ձեռագրի ժամանակը (1665) չի ներշնչում այդ վստահութիւնը:

Բանն այն է, որ սովոր այդ գանձարանի մեջ գրիչն անխտիր գրում է Առաքել վարդապետ՝ առանց տարբերակման: Այս կարգը նա խախտում է միայն երկու անգամ. մեկը՝ «Ամենայն փառք մարդոյ» տաղի, մյուսը՝ «Ի միտ առէք զողոս րանիս» սկզբնատողով ողբերգի համար, որը խորագրված է «Ողբ և խրատ նոյն Առաքել վարդապետէ ասացեալ»²⁴: Ողբերգին նախորդում է «Յիշելով զօր մահուն» սկսվածքով տաղը՝ խորագրված այսպէս. «Ստանաւոր և ողբ Առաքել վարդապետի վասն անձին իւր և ինձ նման մեղաւորի է, եղբայրք»²⁵: Եթե առաջին զեպքում, ըստ «Յիշելով զօր մահուն...» տաղի, այն բացասվում է, քանի որ այդ տաղը Բաղիշեցուն է²⁶: Պոտուրյանը այս տաղը ընծայել է Սյունեցուն, թեև իր օգտագործած ձեռագրերը նրան չեն տվել այդ անելու հնարավորութիւնը²⁷: Ձեռագրերից մեկում տաղն անխորհրդի է, մյուսում՝ Առաքելի անունով²⁸: «Ի միտ առէք զողոս րանիս» սկզբնատողով տաղը նույնպէս Պոտուրյանը հրատարակել է Սյունեցու անունով: Ձեռագրերում տաղը որոշակիորեն չի վերագրված Առաքել վարդապետներից Բաղիշեցուն կամ Սյունեցուն: Դատելով ըստ «Յիշելով զօր մահուն» տաղի՝ այն ևս պետք է ճանաչել որպէս Բաղիշեցու գործ և, հետևապէս, ընդունել, որ նույն Առաքելի տակ գրիչը հասկացել է Բաղիշեցուն: Սա կարող էր չլինել հակասական և կարելի էր կարծել, որ մի զեպքում նույն Առաքելը Սյունեցին է, մյուս զեպքում՝ Բաղիշեցին:

²⁰ Տե՛ս «Մկրտիչ Նաղաշ և իւր տաղերը», Վաղարշապատ, 1898, էջ 8:

²¹ Մ. Նաղաշի «Վասն մահուն» տաղի մեջ «Ամենայն փառք մարդոյ...» տաղից ընդմիջարկվել են հետևյալ ստղերը.

Ի թաղել մեռելոյ ճարակ քեզ արա,

Երբ նորա օրն եկաւ, քեզ այլ պիտի դայ (տե՛ս նույն տեղում, էջ 8):

²² ԱԱ. Սիւնեցի և իր բերթուածները», էջ ԻԴ:

²³ Մատենադարան, ձեռ. 7507, էջ 358բ:

²⁴ Անդ, էջ 362բ:

²⁵ Անդ, էջ 361բ:

²⁶ Ս ու Ր մ ե յ ա ն Ա., Մայր ցուցակ հայերէն ձեռագրուց, Երուսաղեմ, 1953, հ. Գ, էջ 150:

²⁷ ԱԱ. Սիւնեցի և իր բերթուածները», էջ 324:

²⁸ Անդ, էջ ԻԵ, ԻԶ:

Սակայն այդպես կարելի էր կարծել, և թի գրիչը գեթ մեկ անգամ տարբերակած լիներ նրանց, Այսպիսով, շփոփության հարցը մնում է անորոշ, թեև տրամաբանական է կարծել, որ Սյունեցու «Աղամզրբի» հատվածն է Բաղիշեցուն վերագրվել (և իրականում էլ այդպես է) և ոչ թե Բաղիշեցու տաղը՝ Սյունեցուն²⁹։

Հարցի լուսարանման համար ավելի հետաքրքիր են Մատենադարանի № 2079 և Վենետիկի ձեռագրատան թիվ 171 ձեռագրերը, որոնց մեջ տաղն ունի «յԱռաքել վարդապետի Սիւնեաց» նույն խորագիրը՝ տառացի և բառացի համապատասխանություններով։ Երկու ձեռագրերն էլ գրվել են գրեթե նույն տարիներին և միևնույն վանքում, տարբեր են սակայն գրիչները։ Ձեռ. թիվ 171, ժամանակ՝ 1620—1624, տեղ՝ Բաղեշի Ամրգոլու վանք և ապա՝ չիմ անապատ, գրիչ՝ Ստեփանոս³⁰, ձեռ. № 2079, ժամանակ՝ 1622, տեղ՝ Բաղեշի Ամրգոլու վանք, գրիչ՝ Հովհաննես Մոնեացի, պատվիրատու՝ Ստեփանոս։

Այս երկու ձեռագրերն էլ ունեն մի կարևոր ծանոթագրություն, ըստ էության միևնույն հիշատակությունը.

Ձեռ. թիվ 171, էջ 644. «Ով սուրբ ընթերցող, յՔ, Դ (3—4) օրինակ գրեցի զԱղամզրբս. այն որ Սիւնեցի Առաքելի ասացեալն է ԲՌՅ (2300) տուն է գրած ի ցանգն, իսկ որ Պոռեցի³¹ Առաքելի ասացեալն է ԲՃԻ (220) տուն։ Բայց արիւնակներն թամամ չէր, ևս այլ խառն գրեցի»³²։

Ձեռ. № 2079, էջ 353ա, բ. «Ով սուրբ ընթերցող, յՔ, Դ (3—4) օրինակ գրեցի զԱղամզրբս. այն որ Սիւնեաց Առաքելի ասացեալ է ԲՌՅ (2300) տուն էր գրած ի ցանգն, իսկ որ Պոռեցի Առաքելի ասացեալն է ԲՃԻ (220) տուն է։ Բայց օրինակներն թամամ չէր, ևս այլ խառն գրեցի զյետի փոխերս, զի մինչ ի ԻԴ (24) զլուխն Սիւնեաց Առաքելին և անդ ի յետ՝ խառն, և զևոս գոյ գրելոյ»։

Ի՞նչ են ցույց տալիս այս ծանոթագրությունները։

Առաջին, որ երկու ձեռագիրն էլ ունեցել են նույն գաղափար օրինակները, ընդօրինակության նույն սկզբնաղբյուրները։ Երկրորդ, որ այդ օրինակները եղել են խառն ու պակասավոր։ Խառն այն իմաստով, որ նրանց մեջ հստակորեն տարբերակված չեն եղել երկու բանաստեղծների գործերը, թերթեր ու էջեր իրար հետ խառնված լինելու պատճառով, պակասավոր այն իմաստով, որ դրանք մի կողմից չեն ներառել այդ հեղինակների շատ գործեր և, մյուս կողմից առանձին գործեր եղել են թերի, ոչ ամբողջական։ Երկրորդ, որ գրիչներն իրենք հստակորեն չեն տարբերակել Բաղիշեցու գործերը Սյունեցու գործերից կամ հակառակը, եթե ոչ սխալմամբ Բաղիշեցուն չէին վերագրի աներկբայելիորեն Սյունեցուն պատկանող «Աղամզրբից» մեկը։ Երկրորդ, որ միանգամայն տրամաբանական և համոզիչ է կարծել, որ նրանք սխալվել են «Ամենայն փառք մարդոյ» տաղը Սյունեցուն ընծայելիս։ Այստեղից հետևում է, որ այս երկու ձեռագրերը, որոնք տաղը ուղղակի խորագրում են «յԱռաքել վարդապետի Սիւնեաց», նախ՝ էապես նույնանում են՝ ստանալով մի վկայության արժեք և, երկրորդ, որ այդ վկայությունը չի կարող բացարձակ համարվել, քանի որ ձեռագրերում ակնհայտ է երկու բանաստեղծների գործերն իրար հետ շփոթելու փաստը, գրիչների իրենց իսկ խոստովանություններով։

5.

Արդ, ուրիշ ի՞նչ փաստեր ունենք տաղը Սյունեցունը չհամարելու համար։

Առաջին փաստ. տաղը չկա այն ձեռագրերում, որոնք բովանդակում են հավաստիորեն Առ. Սյունեցու հեղինակած գործերը։ Պոտորյանի ձեռքի տակ եղել է մի ձեռագիր՝ Վենետիկի մատենադարանի թիվ 47 տաղարանը, որի մասին բանասերը գրում է. «Բարեբախտաբար ձեռքերիս ունենք նոտր գրչագիր մը, որ առանց ճանչնալու զԲաղիշեցին՝ Սյունեցվո բոլոր գործերը հա-

²⁹ «Ի միտ առէք զողբս բանիս» տաղը նույնպես Բաղիշեցունն է։ Տաղի տնագլուխ սկզբնատառերը ծայրակապում են «Ի յԱռաքելի խնդրեաց Ստեփանոսն»։ Կարծում ենք, որ այս Ստեփանոսը երկայն ընկուզյաց վանքի վանահայր Ստեփանոսն է, որտեղ երկար ժամանակ եղել է և Առաքել Բաղիշեցին (Սյունեցուն Ա., Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց, Երուսաղեմ, 1948, հ. 1, էջ 132)։

³⁰ «Առ. Սիւնեցի և իր բերթուածները», էջ ԻԱ։

³¹ Առաքել Բաղիշեցին կոչվել է նաև Պոռեցի իր ծննդավայրի՝ Բաղեշին մոտիկ Պոռ ավանի անունից։

³² «Առ. Սիւնեցի և իր բերթուածները», էջ ԻԲ, ԻԴ։

կան ու տաղաչափական անհարադատությունը Սյունեցու ստեղծագործության ընդհանուր ոգուն և ոճին,— այս բոլորը տարրեր կողմերից, բայց և միաժամանակ, թույլ են տալիս հաստատապես ասելու, որ տաղի հեղինակը Առաքել Սյունեցին է:

6.

«Ամենայն փառք մարդոյ» տաղի հեղինակը Առաքել Բաղիշեցին է: Կա՞ն արդյոք համոզիչ փաստեր այս եզրակացության համար: Այո, կան:

Առաջին փաստ. Երևանի Մատենադարան, ձև. № 3189, ժամանակ՝ 1627, գրիչ՝ Ղուկաս արքայ: Տաղարանը տաղի հեղինակ է ճանաչում Առաքել Բաղիշեցուն. «Տաղ յԱռաքել վարդապետի Բաղիշեցոյ»³⁷: Տարակուսելու ոչ մի հիմք չկա, թե գրիչը կարող է սխալված լինել: Տաղին հաջորդում է «Այրէն մինչև ի քէն» սկսվածքով մի քերթված, որի հեղինակը նույնպես Բաղիշեցին է³⁸: Այս տաղը ևս Պոստոլյանը հրատարակել է Սյունեցու անունով³⁹: Նրա ձեռքի տակ եղել է երկու ընդօրինակություն, որոնց խորագրերը չեն տարբերակել Առաքել վարդապետներին⁴⁰:

Երկրորդ փաստ. «Ամենայն փառք մարդոյ...» տաղը Տ. Պալյանը հրատարակել է Բաղիշեցու անունով: Պետք է կարծել, որ հրատարակչի օգտագործած աղբյուրը նույնպես տաղս վերագրած է եղել Բաղիշեցուն⁴¹:

Երրորդ փաստ. տաղը հարազատ է Բաղիշեցու ստեղծագործությանը թե՛ լեզվաոճական ու տաղաչափական և թե՛ արտահայտած մտքերի ու թեմատիկ նմանությունների և ընդհանրության տեսակետից: Բաղիշեցու ստեղծագործության սովոր մասը գրված է «Ամենայն փառք մարդոյ...» տաղի 6—5 հատածներով, այսինքն՝ նույն տաղաչափությամբ:

Չորրորդ փաստ. տաղը ուղղակիորեն առնչվում է Բաղիշեցու մի այլ գործի՝ «Ահա եհաս ինձ օր մահու, մարմնոյս նիւթական» սկզբնատողով բանաստեղծության հետ: Այս տաղը, որքան մեզ հայտնի է, պահպանվել է միայն մեկ ձեռագրում⁴²: Բանաստեղծության նյութը մահվան թեման է, աշխարհի ունայնության գաղափարաբանությամբ: Աշխարհն ունայն է, կյանքը վաղանցուկ, հաճույքները՝ խուսափուկ ու խարուսիկ:

Երանի է այնոցիկ, որ զայս իմանան

Եւ յառաջ քան զօր մահուն ի մեղաց դառնան:

Բանաստեղծն ինքն էլ «յառաջ քան զօր մահուն» շի հասել այդ իմաստությանը և հոգու կանչին անտարբեր ու մարմնի պահանջին հնազանդ՝ սիրել է աշխարհն ու աշխարհայինը, փարվել է Լրկրին ու երկրային:

Յաշխարհիս անհոգ կացի ևս թափառական.

Ու զհոգիս իմ ատեցի՝ դպատկեր տիրական:

Հոգու հավիտենական բարին թողած և աշխարհային տրված բանաստեղծը մահվան մահճում է միայն սկսում սարսափել կորստյան դատապարտված իր հոգու համար:

Երկնչիմ, թէ միշտ ողբամ յաւիտենական...

Վլլլ զողամ, թէ թանձրամած մթով սեանամ...

Մահը ցանկալի չէ բանաստեղծի համար, այլ սարսափելի է այն: Բաղիշեցու համար այն միջոց է՝ ներշնչելու և նպատակամղելու մարդուն զեպի աղնիվն ու բարին, ճշմարիտն ու առաքինին: Կյանքը որքան քաղցր ու ցանկալի՝ նույնքան էլ դառն է ու դատարկ, Լթի այն շի

37 Ձև. № 3189, էջ 56ր:

38 Անդ, էջ 60ա, խոր. «Նորին յԱռաքել վարդապետի»: (Նախորդը՝ Առ. Բաղիշեցու «Ամենայն փառք մարդոյ» տաղը):

39 «Առ. Սիւնեցի և իր քերթածները», էջ 280:

40 Անդ, էջ ԻԳ, է:

41 Տ. Պալյան, Հայ աշուղներ, Ջմիւռնիա, 1911, տետր Ա, էջ 134:

42 Ձև. 8294, էջ 115ր:

իմաստնավորված բարի գործի անմահ հիշատակով: Բողիշեցին կրգում է մահը՝ հանուն կյանքի, հանուն մարդկային հոգու անաղարտության ու անարատության՝ այս աշխարհում: Նա խորապես զղջում է, որ ինքը լարի գործ չէ թողել և, զգալով կյանքում թույլ տված սխալը, զրկում է նաև, որ ուշ է արդեն:

Այլ չունիմ նարակ սունել զործս յարութիան...

Եվ հոգեկան այս տանջանքներից, և կյանքից ու հարազատներից մշտապես բաժանվելու զիտակցության վերածված վշտից ծնվում է մի մտայն պատկեր՝ դիակնացած մարդու կենսամերձ պատկերը՝ երբեմնի երիտասարդի կենսասիրության հակադրությամբ.

Տարածեմ վերայ սրտիս զձևոս խաչանման,
Իջանեմ ողորմացիս ի հոգն, ի զնդան:
Էի նախ պայծառատես, ցանկալի մարդկան,
Այսօր դարչ, զսղրահոտ, սրդանց բնակարան:
Ամենայն փառք աշխարհիս զատարկ և ունայն,
Ջոր տեսայ և փորձեցի յայս օրս մահուան:
Իմ որդիքս, այլ և զստերքս, որ այսօր կոծան,
Յետ երևք և շորս աւուր զիս տի մոռանան:
Շրջեցիք յինչն կրես յայս օրս մահուան
Այլ չունիմ ևս բարեկամ և ոչ օղեսական:

Համադրենք մի հատված էլ «Ամենայն փառք մարդոյ» տաղից և ակնհայտ կդառնա երկու տաղերի գրական ոճի հարապատությունը:

Ամենայն փառք մարդոյ զատարկ և ունայն,
Սողոմոն դայս ասլ շնորհօք տիրական,
Բոլորից թլ լինիս դու տէր և իշխան,
Բայց յետոյ մտանես ի հող էի զնդան:
Գարշելի, ծահահոտ մեղօք մի խաբիր,
Գողն յերակ քեզ սպասէ զայս լաւ իմացիր,
Ետդարեա ի շարեաց, բարեաց հետևիր,
Դուռն բաց ի սրտիդ և խոստովանիր:
Եթէ յայսմ աշխարհիս մեղօք մոլորիս
Եղկելի յօր մահուն դու փոշիմանիս...

Երկու տաղերի լեզվաոճական նմանությունները և ընդհանրությունները երևում են հենց այս մեջբերումներից, որքան էլ դրանք լինեն սակավաթիվ ու ցրված: Լեզվաոճական ընդհանրություններից մեկն է Բողիշեցու բառածանցման եղանակներից «ական» ածանցի հաճախազեպ գործածությունը: Դրանք առանձին կրանգ են տալիս նրա լեզվին՝ բնորոշելով բանաստեղծի ոճը: Օր.՝ քաղցրական, աղօթական, անասնական, բաշխական, տիրական, արարչական, կորստական, աղտեղական, նիւթական, պատուական, մոլորական և այլն («Ահա եհաս ինձ օր մահու...»), տիրական, ողորմական, մնացական, կոշնական և այլն («Ամենայն փառք մարդոյ...»):

Երկու տաղերի լեզվական ու ոճական նմանություններն ու բովանդակության ընդհանրությունները, որոնք հեղինակի ոճի միասնության ապացույց են, ակնհայտ է: Նմանությունների հանգուցակետը կարելի է համարել երկու տաղերի՝ «Ամենայն փառք մարդոյ զատարկ և ունայն»՝ և «Ամենայն փառք աշխարհիս զատարկ և ունայն»՝ մեկ բառի ու մեկ վանկի տարբերությամբ տողերը: Սակայն գուցե այս տողերը պատահական զուգահեյություն են, միջարկություն են: Տարակուսանքներն ավելի քան անհիմն են: «Ամենայն փառք մարդոյ զատարկ և ունայն» տողը սկզբնատողն է մի տաղի, որը զրկված է այբբենահանրթ, ուստի նա ունի իր կայուն և ամուր տեղը: «Ամենայն փառք աշխարհիս զատարկ և ունայն» տողը ներշնչված է մի տաղի, որի ակրոստիք սկզբնատողերը ծայրակապում են «Այս Առաքել վարդապետէ Բողիշեցոյ», ուստի այս տողը ևս ունի իր կայուն և հաստատուն տեղը: Պարզ է, որ այդ տողերը պատահական չեն, օտարամուտ միջարկություն չեն, այլ արդյունք՝ նույն հեղինակի աշխարհայնացողության և ստեղծագործական ինքնուրույնության, և ինչպես որ անկասկած է երկրորդ

տաղի հեղինակային պատկանելությունը, այնպես էլ կասկածից վեր է, որ առաջինը ևս՝ «ԱՄՆ. նայն փառք յարդոյ» տաղը պատկանում է Առ. Բաղիշեցուն:

Փաստերի այս ամբողջությունը՝ ձեռագրական ուղղակի և կողմնակի տվյալները, ստեղծագործական բովանդակության ու գրական ոճի և լեզվի ընդհանրություններն ու նմանությունները թույլ են տալիս վճռված համարել «ԱՄՆ. նայն փառք յարդոյ» տաղի հեղինակային պատկանելության խնդիրը և տաղը վերադարձնել իր իսկական հեղինակին՝ 15-րդ դարի առաջին կեսի նշանավոր բանաստեղծ ու մատենագիր Առաքել Բաղիշեցուն:

А. А. Казинян

ОБ АВТОРСТВЕ ОДНОГО СРЕДНЕВЕКОВОГО СТИХОТВОРЕНИЯ

Резюме

В средневековых армянских рукописях переписчики часто путали произведения различных авторов и, в частности, одноименных.

Автор статьи задался целью определить принадлежность одного интересного средневекового стихотворения («ԱՄՆ. նայն փառք յարդոյ...»), приписываемого в разных источниках трем разным поэтам: Мкртычу Нагашу, Аракелу Сюнеци и Аракелу Багишеци. Основываясь на данных 22 рукописей, хранящихся в Матенадаране им. М. Маштона, а также на данных пяти других рукописей, находящихся в книгохранилище венецианских армянских мхитаристов, автор статьи приходит к следующим выводам:

1. Стихотворение не принадлежит перу М. Нагаша.

2. Авторство одного из двух Аракелов—Сюнеци, также отпадает, поскольку в двух рукописях, в которых стихотворение приписывается Аракелу Сюнеци, имеются памятные записи о том, что используемые переписчиками источники были неполные и в них смешаны произведения двух Аракелов—Сюнеци и Багишеци.

3. Автором произведения является Аракел Багишеци. На это, прежде всего, прямо указывают стиль, поэтическое своеобразие и дух песни, характерные творчеству Ар. Багишеци, и, кроме этого, в рукописи, хранящейся в Матенадаране (№ 3184, стр. 56 б.), данное стихотворение также приписывается подлинному автору—Аракелу Багишеци.